

ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՏՎՈՐՅԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆՔԻ ԱՎԱԳ ԵԿԵՂԵՅՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (1900-1920 թթ.)*

ՄԵԱՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Թիֆլիսի վամագ Մայր եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի գործունեությունը ղեկավարելու նպատակով Ավետիս Ղուկասյանը 1901 թվականին կազմել էր ղեկավար մարմին, որը կոչվում էր Մնայուն հանձնաժողով: Հանձնաժողովի կազմը բարեարթի խնդրամքով հաստատել էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մի շարք օրյեկտիվ պատճառներով այդ հանձնաժողովը փաստորեն սկսում է գործել միայն 1904 թվականից: Դեռևս Ա. Ղուկասյանի կենդանության օրոք Մնայուն հանձնաժողովի անդամներից երկուսը՝ Գևորգ Եվանգուլյանը (1901 թ.) և Ալեքսանդր Երիցյանը (1902 թ.) վախճանվում են: 1904 թվականին վախճանվում է նաև հանձնաժողովի անդամ Աբգար Հովհաննիսյանը:

Ա. Ղուկասյանի առաջարկությամբ Մնայուն հանձնաժողովի վախճանված անդամների փոխարեն մոր անդամներ հաստատվեցին՝ Նիկողայոս Տեր-Հարությունյանը (Հարո) և հայտնի հասարակական գործիչ, փիլիսոփա, գրաքննադատ, մամկանավարժ Իսահակ Հարությունյանը: Ավելի ուշ Աբգար Հովհաննիսյանի փոխարեն, ըստ կտակի պահանջների, Կաթողիկոսը հանձնաժողովի անդամ է նշանակում ինժեներ-տեխնոլոգ Արշակ Բաբյանին:

Կրոնա-պատմական թանգարանի մնայուն հանձնաժողովի անդամներիկ միստը տեղի է ունենում 1904 թվականի ապրիլի 5-ին: Նիստին մերկա էին հանձնաժողովի անդամներ Գյուտ ալ. քհն. Աղանյանը, Նիկողայոս Տեր-Հարությունյանը (Հարո) և Իսահակ Հարությունյանը: Նիստում արձանագրվում է, որ 1903 թվականին վարչությունից անկախ պատճառներով մրցանակաբաշխություն չի կայացել: Ղուկասյան մրցանակաբաշխության կանոնադրության «Ժա» կետի համաձայն, հանձնաժողովը որոշում է մրցանակաբաշխության համար տրամադրված հինգ հարյուր ռուբլին օգտագործել «Նախնայաց ընտիր մատենագրություններից» որևէ գրքի տպագրության համար: Այդտեղ էլ որոշվում է նրանց ձևավորման և արտաքին տեսքի հարցերը: Այսպես, որոշվում է հրատարակած գրքերի ճակատային մասում տպագրել «Ղուկասյան մատենա-

* Սկիզբը տե՛ս №26 Դ-Ե:

դարան» քառերը և գիրքը ձոնել համգուցյալ Ավետիս Ղուկասյանի հիշատակին: Այդ միստում քննարկվում են նաև ֆինանսական հարցեր:

Հետագա ամիսներից և տարիներից Մնայուն հանձնաժողովը գումարել է բազմաթիվ միստեր, որտեղ քննարկվել են հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ բազմաբնույթ հարցեր: Նիստերը գումարվել են ոչ համաչափ: Եթե 1904 թ. գումարվել է ընդամենը երեք միստ, որտեղ քննարկվել է 19 հարց, զանազան խնդիրների շուրջ, ապա 1905 թ. ոչ մի միստ չի եղել, իսկ 1906 թ. գումարվել է ընդամենը մեկ միստ, որտեղ քննարկվել է հինգ հարց:

Հանձնաժողովը կանոնավոր միստեր է սկսել գումարել 1907 թվականից: Հիրավի այդ թվականը արգասավոր տարի էր հանձնաժողովի համար, մրա բուռն գործունեության ժամանակաշրջան: 1907 թ. տեղի է ունեցել 18 միստ, երբեմն ամիսը 2-3 միստ, որտեղ քննարկվել են շուրջ 52 հարց:

Հանձնաժողովը քննարկել և լուծել է բազմաթիվ հարցեր՝ կապված կտակի իրականացման հետ: Այդ տարվա միստերում 23 անգամ քննարկվել են կազմակերպական, տնտեսական և ֆինանսական հարցեր, որոնց խիստ կարևոր էին հանձնաժողովի առջև դրված խնդիրների իրականացման գործում: Հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է գրական մրցանակաբաշխության, Ղուկասյան Մատենադարանի հրատարակության, կրոնա-պատմական թանգարանի կառավորման, չքավոր հայ օրիորդներին օժիտի և չքավոր անձանց միանվագ մպաստ տալու հարցերին:

Նիստերը գումարվում էին Թիֆլիսի Հայոց առաջնորդարանի շենքում՝ Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ Գարեգիմ արքեպիսկոպոս Սաթուկյանի մախազաֆությանը: Հարցերի քննարկումը տեղի էր ունենում ժողովրդավարության սկզբունքներով: Որոշումները ընդունվում էին հարցի բազմակողմանի քննարկումից հետո՝ ձայների պարզ մեծամասնությամբ, հաճախ՝ միաձայն: Սակայն բացառված չէին նաև սուր վեճերը, կամ որևէ անդամի անձնական կարծիքը այս կամ այն հարցի կապակցությամբ: Ամենափոքր հարցն անգամ դրվում էր հանձնաժողովի հաստատմանը: Այսպես, օրինակ. 1904 թվականի ապրիլի 15-ի միստը այնչափ հարցերի հետ քննարկել է նաև հետևյալ հարցերը: Պատվիրել՝ 1. Արձանագրության մատյան, 2. Մտից-եղից մատյան, 3. Օրջաբերական մատյան, 4. Գանձապաֆության հաշվեմատյան, 5. Մեծ և փոքր բլանկներ ու ծրարներ, 6. Հանձնաժողովի անունով մի կմիք, 7. Թղթապանակ (պորտֆել): Թերթերում այս կամ այն առիթով հայտարարություններ տալու վերաբերյալ անալոգիկա իրողում էր ընդունվում: Նիստ է գումարվել նաև որևէ դեպքի առիթով: Այսպես, 1907 թվականի հոկտեմբերի 29-ի միստը հրավիրվել է լսելու թեմակալ առաջնորդի հայտարարությունը այն մասին, որ «Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա վախճանվել է առավոտյան ժամը 9-ին»²⁹: Այդ լուրը հանձնաժողովի անդամները լսել են հոտմկայս, որից հետո միստը հայտարարվել է փակված «ի հարգանս Նորին վեհափառության սբ. հիշատակի»: 1908 թ. փետրվարի 18-ի միստում արձանագրվել է, որ «Ապրիլի 7-ին պետք է զեկուցում տրվի հասարակայնությանը հանձնաժողովի գործունեության մասին: Որոշվում է հետևյալ միստին քննության ենթարկել

²⁹ Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

հաշվետվությունը»³⁰։ Հաշվետվությունները պարտադիր կարգով տրվում էին տարին մեկ անգամ։ Երբեմն այդ հաշվետվությունները ընդգրկել են երկու տարվա ժամանակաշրջան։ Հաշվետվությունը տալուց հետո այն տպագրվել է (շուրջ 600 օրինակ) և հանդեսների ժամանակ բաժանվել ներկայներից։

Հանձնաժողովի կարևորագույն խնդիրներից էր կտակի գումարների տնօրինումը, առանց որի հնարավոր չէր սկսել աշխատանքը։ 1904 թվականի նոյեմբերի 11-ի նիստում որոշում է կայացվում դիմել կտակատարներին և պահանջել հասանելի զուտարները։ Սակայն այդ խնդրի լուծումը ձգձգվում է։ Հաջորդ նիստում, որը տեղի է ունենում 1906 թվականի փետրվարի 9-ին, այդ խնդիրը նորից է քննարկվում։ Նիստը արձանագրել է, որ «ի նկատի ունենալով, որ այժմ ոչ մի արգելք չկա գործադրելու հանում թանգարանիս հանգուցյալ Ա. Ղուկասյանի կտակած գումարները, որոշում է՝ ա/ գրավոր դիմել հանգուցյալ բարերարի կտակատարներին՝ տիկին Աննա և պարոն Պողոս Ղուկասյաններին և պարոն Մնացական խուճուճին, և խնդրել, որ կտակած քսանհինգ հազար ռուբլի գումարը տոկոսներով հանդերձ հանձնեն վարչությանը»³¹։ Այդ նիստում ընտրում են նաև հանձնաժողովի անդամ պ. Արշակ Բաբյանին՝ գանձապահ, որին և հանձնարարվում է վարչության գրավոր վավերաթղթերով դիմել կտակատարներին և ստանալ հիշյալ գումարը և ի պահ տալ Թիֆլիսի բանկային հաստատություններից որևէ մեկում։ Այդտեղ էլ որոշվում է այդ բանկային հաստատությունը ուղարկել հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությունները, որպեսզի բանկից դրամ հանելու դեպքում բանկի վարչությունը ճանաչի վերոհիշյալների ստորագրությունները, իսկ գանձապահը բանկից դրամ կարող էր ստանալ միայն չեկային կտրուճով, որի վրա ամպայման պետք է լինեին հանձնաժողովի նախագահի և մի անդամի ստորագրությունները։ Հաջորդ նիստում, 9 հունվարի 1907 թվականին, գանձապահ Ա. Բաբյանը զեկուցում է, որ ինքը կտակատարներից ըստ կտակի ստացել է հանձնաժողովի տնօրինման 25 հազար ռուբլի։ Նրան էին ավելացել նաև անցած 1,5 տարվա տոկոսները։ Ամբողջ գումարը կազմում էր 27 հազար հինգ հարյուր տասներկու ռուբլի 76 կոպ.։

Բաբյանի զեկուցումից հետո հանձնաժողովը որոշում է կայացնում լայնորեն ծավալել հանձնաժողովի գործունեությունը։ Առաջին հերթին անհրաժեշտ էր մշակել կանոնադրություն՝

1/ Թանգարանի կառավարման, 2/ չքավոր հայ օրիորդներին օժիտ տալու կանոնների և ապրիլի 7-ին չքավորներին դրամ բաժանելու կարգի մասին։ Գրական մրցանակաբաշխության համար աշխատանքների ներկայացնելու կարգի մասին հայտարարության ձևը որոշվեց մշակել հաջորդ ժողովում։

Հաջորդ նիստը կայացում է 1907 թ. հունվարի 11-ին, որտեղ Ա. Բաբյանը ներկայացնում է իր կազմած կանոնների նախագծերը, որոնք հավանություն են գտնում։ Առաջարկվում է մինչև հետևյալ նիստը կանոնները վերջնականապես խմբագրել և ուղարկել Կաթողիկոսի հաստատմանը։ Նիստում նաև որոշում է ընդունվում վերոհիշյալ կանոնները մրցանակաբաշխության կանոնադրության

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում։

հետ միասին տպագրել մի գործույթի մեջ և տեղական և արտասահմանյան թերթերում հայտարարություն հրապարակել մրցանակաբաշխության մասին:

Մի քանի ամիս անց, Ա. Բաբյանի Թիֆլիսից շուտափույթ մեկնելու կապակցությամբ, գանձապահի պարտականությունները ժամանակավորապես ստանձնում է Նիկողայոս Տեր-Հարությունյանը (Հարոն): Սակայն ժամանակավոր ստանձնումը շուտով փոխվում է մշտականի, և Ն. Հարոն դառնում է հանձնաժողովի մշտական գանձապահ: Նա այդ գործում դրսևորում է ակնառու ընդունակություններ: Անձեռնմխելի քսանհինգ հազար ռուբլու արժեքի արձանները 1907 թ. հոկտեմբերին փոխում է և ճորից մեկ տարի ժամանակով հինգ և կես տոկոսով պահ է տրվում բանկին, դրանով իսկ զգալիորեն ավելացնելով ընթացիկ գումարի չափը:

Ֆինանսական ամեն մի գործառության թույլատրման հարցը պարտադիր քննարկվել է մնայուն հանձնաժողովի միստում կամ մախորքը համաձայնեցվել նրա անդամների հետ:

1907 թ. դեկտեմբերի 20-ի արձանագրության մեջ կարդում ենք. «Ղ. Փարպեցու տպագրության համար Օր. Աղանյանի տպարանին տալ 100 ռուբլի», կամ գանձապահին իրավունք տալ առևտրական բանկի ընթացիկ հաշվից ստանալ 150 ռուբլի: Մի այլ արձանագրության մեջ կարդում ենք (1908 թ. 14-ը մոյսեմբերի) Գյուտ ավ. քհն. Աղանյանը ներկայացրեց Ղ. Փարպեցու տպագրության հաշիվը:

Հանձնաժողովի գործունեության կարևոր բնագավառներից էր գրական մրցանակի և Ղուկասյան Մատենադարանի հրատարակության գործի կազմակերպումը: Այդ կապակցությամբ հանձնաժողովը պարբերաբար հայտարարություն էր տպագրում տեղական և արտասահմանյան հայ մամուլում, որպեսզի ինչքան հնարավոր է շատ մտավորականներ մասնակցեին մրցույթին: Սկզբի տարիներին (1901-1906 թթ.) մրցույթի գործը այնքան էլ հաջող չէր: Պարզապես այդ տարիներին մրցույթի համար աշխատությունները չեն ներկայացվել կամ ներկայացվել են ուշացումով: Սակայն, հանձնաժողովի կատարած քրտնաջան աշխատանքի շնորհիվ, հետագա տարիներին զգալի թվով մտավորականներ են մասնակցել գրական մրցույթին:

Գրական մրցույթի կազմակերպման գործը բավականին բարդ և կանոններով սահմանափակված գործ էր (ներկայացված ժամկետը, աշխատանքի ծավալը և թվանդակությունը, գրախոսության ստացումը և այլն): Այդ է պատճառը, որ ամեն տարի չէ, որ անց է կացվել մրցույթ:

Կարևոր հանգամանք էր գիտակ գրախոսների ընտրությունը, առավել ևս, որ այդ գրախոսությունները կատարվում էին անվճար:

Գրախոսների աշխատանքն ինչ-որ չափով խրախուսելու նպատակով հանձնաժողովը որոշում է «Ղուկասյան մատենադարանի» տպագրված գրքերից մեկական օրինակ ուղարկել այն բոլոր անձանց, ովքեր հանձն են առել գրախոսելու հանձնաժողովի ուղարկած աշխատանքները:

Մրցանակաբաշխության արարողությունը կատարվում էր հանդիսավոր պայմաններում, օրը մշանակված էր ապրիլի 7-ին: Այն կայանում էր Թիֆլիսի առաջնորդարանի դահլիճում՝ Ավետիս Ղուկասյանի հոգեհանգստի արարողությունը կատարելուց հետո: Այդ ժամանակ էլ նպաստներ էին տրվում չքավորներին: Միաժամանակ տեղի էր ունենում վիճակահանություն, որը որոշում էր օժիտ ստացող չքավոր օրիորդների անունները:

Չմայած կրոնա-պատմական թանգարանն ուներ նշանակված և կաթողիկոսի կողմից հաստատված կառավարիչ, որը մույնպես հանձնաժողովի անդամ էր, սակայն թանգարանին վերաբերող բոլոր հարցերը լուծվում էին հանձնաժողովի քննարկմամբ:

Հանձնաժողովի անդամները, լինելով տարաբնույթ զբաղմունքի տեր անձնավորություններ, ամեն կերպ աջակցում էին նրա աշխատանքներին՝ քարեխղճորեն կատարելով իրենց պարտականությունները, թույլ չտալով որևէ խախտում կամ ավելորդ ցուցամուտություն:

Նիստերից մեկում (1914 թ. դեկտեմբերի 15-ի) հանձնաժողովի անդամ Արշակ Բաթյանը առաջարկում է «Ղուկասյան Մատենադարանի» բոլոր գրքերի սկզբնամասում դնել հիմնադիր Ավետիս Ղուկասյանի դիմանկարը, իսկ վերջում՝ հանձնաժողովի կազմը: Առաջարկությունն անցնում է մասնակի: Որոշում է կայացվում ընդունել միայն առաջարկի առաջին մասը: Այստեղ տեղի է մեղ, որ հանձնաժողովի անդամները չունեին որևէ ակնկալիք և աշխատում էին հասարակական կարգով: Դեռևս 1904 թ. մայիսի 11-ին, հանձնաժողովի առաջին նիստերից մեկում, որոշում էր կայացվել, որպես սկզբունք վարչության անդամները վարչության վերաբերյալ որևէ աշխատանքի կամ գործի համար վարձատրություն չեն ստանում: Մնայուց հանձնաժողովի անդամները սրբությամբ պահպանում էին այդ սկզբունքը:

Ղուկասյան գրական մրցանակի կանոնադրության մեջ նշված էր, որ Ավետիս Ղուկասյանի մկրտավությանը հաստատված մրցանակը կոչվում է «Ղուկասյան մրցանակ»: Այն պետք է տրվեր ամեն տարի ապրիլի 7-ին, Ս. Կույսի Ավետման տոնին: Ղուկասյան մրցանակի նյութը պետք է պատկանի հայ լեզվի, հայ դպրության կամ հայ պատմության ճյուղերին, այն է՝ հայոց լեզվի և գրականության հետազոտության, հին հայ մատենագիրների թարգմանության լուսաբանություններով կամ թանախիական քննադատություններով ճոխացրած, ազգային կամ եկեղեցական պատմության լուսաբանված հատվածներ, հայաբնակ գավառների աշխարհագրական տեղագրություն, ազգային գեղարվեստի հետազոտություն, հայ օրենսգիրության կամ կանոնադրության վերաբերյալ տեսություններ և այլն: Այնուհետև կանոնադրությունը սահմանում էր՝ մրցանակին մասնակցողի անձը, երկի լեզուն, ներկայացման ժամկետը: Մրցանակի չէին կարող ներկայացվել օտար լեզուներից թարգմանություններ, դասագրքեր, մի անգամ արդեն որևէ ազգային հաստատությունից վարձատրված երկեր, հին մատենագրության պարզ թարգմանություններ և մրցության ժամանակից երկու տարի առաջ տպագրված գործեր: Հանձնաժողովը ներկայացված գործը պետք է խնայողի միջոցով քննության, որից հետո հանձնի մասնագետի քննության և այլն³²:

Վեհափառը գոհունակությամբ է ընդունում գրական մրցանակի նախաձեռնությունը, որոշ պարգևատրումներ մտցնելով կանոնադրության մեջ՝ այն հաստատում է:

Հանձնաժողովը ձեռնամուխ է լինում գրական մրցանակի կազմակերպման աշխատանքներին: Գրական մրցանակի պայմանների և ժամկետների մասին

³² Տե՛ս կանոնադրություն Ա. Ղուկասյան մրցանակի, Թիֆլիս, Էլեկտրաշարժ տպարան օր. Ն. Աղանյանցի, 1907::

պետք է իրազեկ դարձվեր հայ և օտարազգի մտավորականությանը, ովքեր զբաղվում էին հայոց լեզվի, գրականության, պատմության ուսումնասիրությամբ, կազմակերպեր մրցանակի ներկայացվող երկերի ստացումը, նրանց նախնական ուսումնասիրությունը, համեմատողովի անդամների կողմից համապատասխան մասնագետներին գրախոսման ուղարկելու գործը, որից հետո միայն, համեմատողովի միստում քննարկելուց հետո, որոշվեր մրցանակի արժանի երկը: Մշտական համեմատողովը գրական մրցանակի գործը սկսում է 1907 թվականի հունվարի 11-ի միստով՝ որոշում կայացնելով տեղական և արտասահմանյան մի քանի հայերեն օրաթերթերում հայտարարություն տալու մասին: Այդ հայտարարության մեջ պետք է նշվեր մրցության կանոնների գլխավոր և կարևոր կետերը³³:

Մրցանակի համար առաջին աշխատանքները ստացվում են 1907 թվականի սկզբներին: Այդ աշխատանքներից առաջինը Ախալքալակից Սեյլան ծածկանվամբ ներկայացված ձեռագիր գործն էր՝ «Հովհան վարդապետ Վարազագու ողբը» վերնագրով, այնուհետև Գ. Իսկենդերյանի «Էջմիածնի կաթողիկոսությունը ժԸ դարում», Հ. Մրմըրյանի «Հին օրեր - պոետ խաչատուր Միսաքյան» ձեռագիրը, Վենետիկի «Բազմավեպ» հանդեսի խմբագիր Կարապետ Տեր-Սահակյանի թարգմանած «Հայ կայսրը Բյուզանդիոնի» երկհատորյակը: Սանոսյանի «Հայաստանի զոհեր ի Բաբերդ», Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ», Հրաչյա Աճառյանի «Հայկական բարբառագիտություն» և Երվանդ Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» աշխատանքները: Համեմատողովը աշխատանքները ստանալուց հետո որոշում էր կայացնում նրանք քննադատության (գրախոսության) ուղարկելու մասին: Սեյլանի «Հովհան վարդապետ Վարազագու ողբը» տրվում է Մնայում համեմատողովի անդամներ Գյուտ ալ. քհն. Աղանյանին և Իս. Հարությունյանին: Նրանք քննադատությունը հակիրճ էր: Գյուտ ալ. քհն. Աղանյանը նշում է, որ այդ գրվածքը մի տաղաչափական փոքրիկ գրվածք է պ. Սեյլանի ներածությամբ և մեկը Վանի թշվառությունների այն նկարագրություններից, որոնց մասին բազմաթիվ մանր գրչագիրներ կան մույնիսկ այստեղ՝ Թիֆլիսում: Իս. Հարությունյանը իր զեկուցման մեջ նշում է «Տասը մանր էջից բաղկացած բնագիրը չի լուսաբանված գիտական հիմունքներով և բանասիրական արժեք անգամ չունի»³⁴:

Մարտի 23-ի միստում Իս. Հարությունյանը զեկուցում է, որ պ. Կ. Կոստանյանը գրավոր հայտնել է, որ անկարող է համեմ առնել Գ. Իսկենդերյանի «Էջմիածնի կաթողիկոսությունը ժԸ դարում» աշխատության քննադատությունը, որովհետև «պատրաստվում է ճանապարհորդության ելնելու դեպի արտասահման հիվանդ կնոջ թժշկության համար»: Համեմատողովը մարտի 23-ին արձանագրում է, որ կարճ ժամանակ է մնացել մինչև ապրիլի 7-ը, ուստի այդ աշխատանքը պահել հաջորդ տարվա մրցանակաբաշխության համար: Ժամանակին չստացվեցին մահ Մրմըրյանի «Հին օրեր» աշխատության գրախոսությունները, որ պետք է ուղարկեին Մ. Աբեղյանը և Լ. Սեդրոսյանը (Շանթ): Չնայած համեմատողովի գործադրած քանքերին, այդպես էլ մրցանակի առաջարկված աշխատանքներից

³³ Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

³⁴ Նույն տեղում:

մի քանիսը ժամկետից ուշ ստացվեցին, իսկ մի քանիսի համար խնդրված գրախոսությունները դեռ չէին ստացվել՝ ժամանակի սղության պատճառով: Այդ կապակցությամբ որոշվեց երեք ձեռագիր և երեք տպագիր աշխատանքները թողնել հաջորդ տարվա, իսկ 1907 թ. մրցամակաբաշխությունը չկատարել³⁵: 1907 թ. ապրիլի 5-ին ստացվում է Մանուկ Աբեղյանի գրախոսությունը Մոմբրյանի «Հիմ օրեր» աշխատանքի մասին, որը թողնվեց 1908 թ. մրցամակաբաշխությանը: Տարեկերթին ստացվում է Հր. Աճառյանի «Հայկական քարառագիտություն» աշխատանքը, որը ուղարկվում է լեզվաբան Լևոն Քյանջեցյանի գրախոսմանը, իսկ Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» աշխատությունը ուղարկվում է Ս. Պետերբուրգ, պրոֆ. Գրիգոր Նալաթյանի գրախոսմանը:

«Էջմիածնի կաթողիկոսությունը ԺԸ դարում» երկասիրությունը ուղարկվում է Էջմիածին, Գարեգին վարդապետ Հովսեփյանի գրախոսմանը: «Հայ կայսերք Բյուզանդիոնի» աշխատասիրությունը՝ Ն. Քարամյանին, իսկ Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Նորբեցացու Հայոց պատմության մեջ» ուսումնասիրությունը՝ Ե. Շահազիզին: 1908 թվականի մրցամակաբաշխության ժամկետը մոտենալու կապակցությամբ հանձնաժողովը ավելի հաճախ է միտեր գումարում՝ քննարկելու համար մրցույթին ներկայացված գործերը և մրանց գրախոսականները: 1908 թվականի հունվարի 28-ի նիստում քննարկելով Սամոսյանի «Հայաստանի գոհերը ի Բաբերդ» աշխատությունը, հանձնաժողովը գտնում է, որ այն իր բովանդակությամբ չի համապատասխանում մրցամակի պահանջներին և որոշում է այն մրցանակի չներկայացնել, այլ պահել հանձնաժողովի դիվանում³⁶: Հետաքրքրական է Սամոսյանի մամակը, որ մա ուղարկել էր 1908 թվականի հոկտեմբերի 20-ին Բաբերդից «Քամիլ» ստորագրությամբ, հանձնաժողովի նախագահ Գեղաշնորհ Տեր Գարեգին եպիսկոպոս Սաթուցյանին: Նամակում հեղինակը խնդրում է Գարեգին եպիսկոպոսին ձեռք բերել իր նշված աշխատությունը և հանձնել ՀՅԴ կուսակցության Արևելյան բյուրոյին կամ եթե «Ձերդ հայրական հոգածության արժան կտայիք զիս, դուք ինքնին հանձնեք Ղուկասյան մրցամակին»³⁷: Վերջում ավելացնում է. «Մաղթելով Ձեր թանկագին կենաց առողջություն և երջանիկ օրեր, սպասում եմ Ձեր գրության, որ զիս երջանիկ պիտի կացուցանե բանտիս մեջ...»³⁸: 1908 թվականի փետրվարի 25-ի նիստում քննարկվում է պրոֆ. Գ. Նալաթյանի գրավոր կարծիքը Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» ուսումնասիրության մասին: Չուեննալով լուրջ առարկումներ, հանձնաժողովը որոշում է սպասել մինչև բոլոր աշխատությունների վերաբերյալ ստացվեն գրախոսականները և ապա բոլորը միասին քննության առնել: Նույնը վերաբերում էր մահ հայր Կարապետ Տեր-Սահակյանի «Հայ կայսերք Բյուզանդիոնի» երկհատոր աշխատությանը, որի մասին դրվատական գրախոսական էր գրել պ. Ն. Քարամյանը: Մարտի 17-ի նիստում լսվում է Գարեգին վարդապետ Հովսեփյանի գրավոր կարծիքը՝ «Էջմիածնի կաթողիկոսությունը ԺԸ դարում»

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում, գ. 90:

³⁸ Նույն տեղում:

աշխատության մասին և պ. Երվանդ Ծաֆազիզի գրախոսականը՝ Մ. Արեղյանի «Հայ ժողովրդական առասպելները» գրքի մասին:

Որոշվում է մրցանակաբաշխության խնդրին անդրադառնալ հետևյալ միտում, երբ ստացված կլինի նաև պ. Գյանջեցյանի գրախոսությունը Հր. Աճառյանի աշխատության մասին: Որոշվում է հեռագրել Պետերբուրգ պ. Լ. Գյանջեցյանին՝ արագացնելու գրախոսության ուղարկումը: Վերջապես մարտի 31-ին, երբ արդեն ստացվել էին բոլոր գրախոսականները, դրանք նորից են կարդացվում միտում, և երկար խորհրդակցելուց հետո հանձնաժողովը ընտրություն է կատարում: Ընդունված որոշման մեջ ասված էր. «Ի նկատի ունենալով ներկայացված աշխատությունների համեմատական արժանավորությունները, քննադատների զեկուցումները և նյութի կարևորությունը, մրցանակի արժանի համարվեց պ. Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» ձեռագիր (մասամբ տպված) աշխատությունը և Մ. Արեղյանին՝ «Հայ ժողովրդական առասպելները Մ. Նորենացու Հայոց պատմության մեջ» տպագիր երկը»: Հանձնաժողովը որոշում է հիմա հարյուր ոտքի մրցանակը երկու մասի բաժանելով պ. Ե. Լալայանին տալ երեք հարյուր, իսկ պ. Մ. Արեղյանին՝ երկու հարյուր ոտքի»³⁹: Նիստում հանձնաժողովը որոշում էր կայացրել բոլոր աշխատությունների քննադատությունները՝ թե՛ դրականները և թե՛ բացասականները, տպագրել տարեկան զեկուցագրի մեջ:

1908 թվականի ապրիլի 7-ին տեղի է ունենում մրցանակաբաշխության հանդեսը: Հանդեսին հրավիրվել էին Թիֆլիսի հայտնի հաստատությունների և ընկերությունների վարչության անդամներ, Ներսիսյան դպրոցի ավարտական խմբերի աշակերտները, պարբերական հրատարակչությունների և խմբագրությունների ներկայացուցիչներ: Այդ առթիվ տպագրված հրավիրատոմսում ասվում էր. «Վաճաք Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի մնայուն հանձնաժողովը խնդրում է Ձեզ ապրիլի 7-ին կեսօրվա 1 ժամին շնորհ բերել առաջնորդարան, ուր տեղի կունենա հանձնաժողովի տարեկան տեղեկագրի ընթերցումը և Ղուկասյան գրական մրցանակաբաշխությունը. Նախագահ Մնայուն հանձնաժողովի Գարեգին Արքեպիսկոպոս, անդամ-քարտուղար Ի. Հարությունյան»:

Առաջին մրցանակաբաշխության հանդեսը անցնում է հանդիսավոր պայմաններում և լայն արձագանք գտնում տեղական մամուլում: Մնայուն հանձնաժողովը հիրավի մեծ աշխատանք էր կատարել՝ անկողմնակալ ձևով ընտրելով մրցանակի արժանի գործեր: 1907 և 1908 թվականներին, միջև մրցանակաբաշխության օրը, հանձնաժողովը գումարել է քսանյոթ միստ՝ գրեթե բոլոր միստերում քննարկելով մրցանակաբաշխությանը վերաբերող հարցեր: Ինչպես ասացիք, մրցանակաբաշխության կանոնադրության համաձայն մրցանակի ներկայացված գործերի գրախոսությունը կատարվում էր անհատույց: Ժամանակի ճանաչված քաղվածքի հայ և օտարազգի հայագետ գիտնականներ և մտավորականներ սիրով հանձն էին առնում կատարելու այդ պատվավոր աշխատանքը: Մրցանակի ներկայացված աշխատանքները գրախոսել են պրոֆ.

Ն. Մառը (Ս. Պետերբուրգ), պրոֆ. Ն. Աղոնցը (Ս. Պետերբուրգ), հայագետ պրոֆ. Հովսեփ Կարստը (Օտտոնգարտ) և ուրիշներ:

Մրցանակի համարվը գնալով մեծ մասսայականություն էր ստանում, ավելի շատ հեղինակներ, այդ թվում՝ ճանաչված գիտնականներ էին մասնակցում մրան: Այդ հանգամանքը ստիպում էր համձնաժողովին ավելի շատ ժամանակ հատկացնել մրցանակաբաշխության մախապատրաստմանը: Հունիսի 6-ին տեղի ունեցած միստում համձնաժողովը քննարկում է 1909 թվականի մրցանակաբաշխության մախապատրաստման հարցը: Որոշում է կայացվում տեղական օրաթերթերում և արտասահմանյան հայ մամուլում հայտարարություն գետեղել հաջորդ մրցանակաբաշխության համար գործերի ընդունման մասին: Պետք է ասել, որ դա տվել է իր դրական արդյունքները: 1908 թվականի մոյսերին արդեն ստացվում են Արշակ Ալպոյաճյանի «Պատմություն հայ գաղթականության» չորս հատորամոց աշխատանքը, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանի «Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորաց եկեղեցիների հետ» պատմական ընդարձակ ուսումնասիրությունը, Հայր Գրիգորիս Ծ. վրդ. Գալստեքյանի՝ Մխիթարյան միաբանությունից, «Կենսագրություն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյանի և ժամանակի հայ կաթողիկոսները», Խաչատուր Բաբայանի «Բագրատունյաց մախարարությունը» պատմական ուսումնասիրությունները, Հր. Աճառյանի «Բնայեզվագիտություն կամ բառարանական ստաոտիստիկա և հայերենը» ձեռագիր աշխատությունը, Սմբատ Բյուրատի Սոֆոկլեսի «Եդիպոս արքան» ողբերգության հանգավոր թարգմանությունը: Մրցանակի ուղարկված գործերը երբեմն ուղեկցվում էին բացատրություններով:

Կոստանդնուպոլսից ուղարկված մամուլում Արշակ Ալպոյաճյանը գրում էր. «Սույն գործը հայ գաղթականության պատմության ուրվագիծ է, որը հույս ունիմ իրականացնելու տարիների ընթացքում, իսկ մերկայացված գործը փաստորեն դրա մախապատրաստական աշխատանք է, ուր ուշադրությունը կենտրոնացրել ենք ոչ թե յուրաքանչյուր գաղութի պատմությունը մերկայացնելու վրա, այլ տալու այն ընդհանուր և լայն գործերը, որոնք կկազմեն հայոց գաղթականության պատմության իմաստասիրությունը և ընդարձակ գաղթականության պատմության առաջին և անհրաժեշտ հիմնաքարերը»⁴⁰: Աշխատության մեջ ցույց են տրված բոլոր այն բնական և քաղաքական պատճառները, որոնք հային դարձրել էին գաղթական ժողովուրդ, պարզաբանված էին այն պատճառները, որոնք ստիպել են հային մեկնելու հայկական գաղթօջախներ, մերկայացվում է մահ հայկական գաղութների մերքին կյանքը և սպասվող ապագան: Աշխատության մեջ գետեղված էին մահ աշխարհագրական քարտեզներ՝ այն մվելի դյուրըմբռնելի դարձնելու համար: Վերջում հեղինակը նշում է, որ այդ գործը իբրև անջատ աշխատություն արժանացել է Հովսեփ Իզմիրլյան մրցանակի, սակայն համձնաժողովը պետք է հաշվի առնի, որ ընդհանուր աշխատության այս մասը գուրկ չէ արժանիքներից և համդիսամում է տարիների անձնական հետագոտությունների արդյունք:

Էջմիածնի Մայր Աթոռի միաբան Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանն իր աշխատությունը բնութագրել էր որպես պատմական ընդարձակ ուսում-

մասիրություն: Հայր Գրիգորիս ծ. վ. Գալեմքերյանը գրում էր, որ մա Ռիմվել է միայն ստույգ վավերագրերի վրա՝ զգուշանալով կողմնակալությունից, խույս չտալով ծախսից և աշխատանքից, միաժամանակ նշելով, որ աշխատում է մոտ գրքի վրա, որը նվիրված է Կ. Պոլսի Հայոց և հայ կաթողիկոսների պատմությանը: Փարիզում լույս տեսնող «Բանասեր» ամսաթերթի խմբագիր Կ. Հ. Բասմաճյանը զգուշացնում է մրցանակաբաշխության հանձնաժողովին, որ գրքում տեղ են գտել լատիներեն, ասորերեն և հին ֆրանսերեն վավերագրերի հայերեն թարգմանությունները և որ թերություն չհամարել դրանց բնագրերը չգետնելու համար, և թե հանձնաժողովը դրա կարիքը զգա, պատրաստ է անմիջապես ուղարկելու: Հրաչյա Աճառյանն իր աշխատությունը ուղարկել էր վերին Ազգիկիսի՝ որպես ծածկանուն ընտրելով «Հեղինակ» անվանումը:

Սմբատ Բյուրատը իր աշխատությունը, որը Սոֆոկլեսի «Եդիպոս Արքա» ողբերգության թարգմանությունն էր հանգավոր ոտանավորի ձևով, ուղարկել էր Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքից: Նա նշում էր, որ երբ մեծարգո հանձնաժողովը գնահատման արժանացնի այն, ապա ինքը մեծապես ուրախ պետք է լինի այն գիտակցությամբ, որ հայ թատրոնին ամենափոքրիկ ծառայությունն է մատուցել, որ աշխարհաբար հանգավոր իր թարգմանությունը սկզբունք կհանդիսանա մեր դերասաններին մղելու դեպի մեր գործունեություն, որ, վերջին տարիներին մանավանդ, կհայտնվի եվրոպական գեղարվեստական աշխատությունների մեջ: Վերջում նշում է, որ «հայ մտքի մշակին յուրահատուկ եղող մյուսական պայմանների պակասը՝ տպագրության դժվարության առջև, տարիներ ի վեր ստիպված են փոշիների մեջ թաղել 25 տարվա աշխատանքի արդյունքը»:

Մրցանակաբաշխության հանձնաժողովը մանրագին քննարկելով վերոհիշյալ աշխատությունները, որոշում է.

ա) Ա. Ալպոյաճյանի աշխատանքը ուղարկել գրախոսության Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ Վարդապետին:

բ) Երվանդ Տեր-Մինասյանի աշխատությունը մերժում է դնել մրցանակաբաշխության, որպես այլ անհատի ծախքով տպագրված աշխատանք, մրցանակաբաշխության կանոնադրության 3-րդ հոդվածի «դ» կետի համաձայն:

գ) Կ. Բասմաճյանի աշխատանքը մույնպես չենթարկել մրցանակաբաշխության մույն թիմունքներով:

դ) Հայր Գրիգորիս ծ. վ. Գալեմքերյանի աշխատանքը քննության հանձնել բանասեր, բժիշկ Միսակ Արամյանին:

ե) Խաչատուր Բաբայանի աշխատանքը որոշվում է հանձնել Ստեփան Լիսիցյանին:

զ) Հր. Աճառյանի ձեռագիրը՝ Ստեփան Մալխասյանին:

է) Սմբատ Բյուրատի աշխատանքը ևս մերժվում է մրցանակաբաշխության դնել, իբրև օտար լեզվից թարգմանություն՝ 4-րդ հոդվածի առաջին կետի Ռիման վրա: Բոլոր գրախոսներին ժամանակ է տրվում մինչև 1909 թ. փետրվարի 15-ը:

Բժիշկ-բանասեր Մ. Արամյանը 1908 թվականի դեկտեմբերին Ծալկայից գրած մամակով հայտնում էր հանձնաժողովին, որ պատասխանի ուշացման պատճառը պաշտոնական գործերով իր բացակայությունն էր: Այնուհետև գրում է, որ ինքը խոր հարգանք է տածում հանձնաժողովի նկատմամբ և մեծ ցանկություն ունի կատարելու հանձնարարությունը, սակայն ստիպված է

հրաժարվելու «Առաջադրված վավերագրերը ստուգելու հնարավորություն չունենալու պատճառով»:

Համեմատողովը հարգում է մրա խնդրանքը և որոշում Գալսեմբերյանի աշխատանքը ուղարկել Ս. Պետերբուրգ, Ն. Ադոնցի՝ գրախոսման:

1909 թվականի ապրիլի 5-ի միստում համեմատողովը քննարկում է գրախոսության ուղարկված աշխատանքների ստացման վիճակը և արձանագրում, որ Ստ. Մալխասյանը ուղարկել է Հր. Աճառյանի «Բնայեզվագիտություն կամ բառարանական ստատիստիկա ու հայերենը» աշխատության գրախոսությունը, սակայն դեռևս չեն ստացվել Կարապետ Վարդապետի, Ն. Ադոնցի, Ստ. Լիսիցյանի գրախոսությունները: Որոշվում է երկու ամսով հետաձգել մրցանակաբաշխության համոզելը և մյուս միջոցառումները, մինչև որ ստացվեն բոլոր գրախոսությունները: Ժամկետը լրանալուց հետո էլ չէին ստացվել ուղարկված աշխատանքների գրախոսությունները, որի պատճառով 1909 թվականի հուլիսի 13-ին համեմատողովը որոշում է 1909 թ. մրցանակաբաշխությունը չկայացնել: Համեմատողովը շարունակում է իր աշխատանքները: 1909 թ. դեկտեմբերի 4-ին քննարկվում է Կարապետ Եպիսկոպոսի կողմից ուղարկված «Պատմություն հայ գաղթականների» գրքի մասին գրախոսությունը, սակայն որոշվում է մի երկրորդ գրախոսության ևս համեմել մույն աշխատությունը՝ ուղարկելով Պետերբուրգի հայոց եկեղեցու հովիվ Մկրտիչ Զահաբյանին: Նույն միստում զեկուցվում է, որ ստացվել են Ասլան Օհանազարյանի «Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների գործունեությունը» և Սմբատ Տեր-Ավետիքյանի «Սանահինի և Ղազախ գավառի արձանագրությունները» աշխատությունները: Դրանցից առաջինը ուղարկվում է Ստ. Լիսիցյանին, իսկ երկրորդը՝ պ. Քաջբերդունու (Գաբրիել Հովհաննիսյան) գրախոսելու համար: 1910 թվականի մարտի 4-ին համեմատողովը լսում է Քաջբերդունու և Ադոնցի կողմից ուղարկված գրախոսությունները: Ինչպես միշտ, այս անգամ էլ որոշում է սպասել մյուս գրախոսությունների ստացմանը և հետագրել Պետերբուրգ, Մկրտիչ Ղազարյանին, որ շտապեցնի գրախոսության ուղարկումը: Օտսով ուղարկվում է Մ. Ղազարյանի գրախոսությունը: 1910 թ. ապրիլի 2-ի միստում համեմատողովում նորից է ըմբերցվում բոլոր գրախոսությունները և որոշում կայացվում մրցանակ տալ Պետերբուրգից ուսանող Ասլան Օհանազարյանի «Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների գործունեությունը» և Սմբատ Տեր-Ավետիքյանի «Սանահինի և Ղազախ գավառի արձանագրությունները» աշխատություններին, հիմա հարյուր ռուբլի մրցանակադրամը բաժանելով երկու մասի:

Մրցանակաբաշխության հանդեսից հետո համեմատողովը շարունակում է իր գործունեությունը: 1910 թվականի ապրիլի 29-ին քննարկվում է հաջորդ տարվա մրցանակաբաշխության հարցը և նորից որոշում է կայացվում տեղական և արտասահմանյան թերթերում մրցանակաբաշխության մասին հայտարարություն տալ: Այն պետք է լինե՝ «Նամակ խմբագրության» ձևով, որպեսզի հայտարարությունների համար վճարելիք գումարը չծանրանա համեմատողովի դրամարկղի վրա»⁴¹, նշված էր որոշման մեջ:

41 Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

1910 թվականի վերջերից ստացվում են «Ղուկասյան մրցամակի» համար ներկայացվող գործերը: Համձնաժողովը որոշում է «Լաֆյան» ծածկանվամբ Բեռլինից ստացած «Հայոց եկեղեցական կանոնական իրավունքը» ձեռագիր աշխատանքը ուղարկել Կ. Պոլիս, Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյանին՝ գրախոսմամբ: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Ներսես Ակիմյանի «Կյուրոս կաթողիկոս Վրաց. պատմություն հայ-վրացական հարաբերությունների և դարու մեջ» աշխատությունը, որը լույս էր տեսել 1910 թ. Վիեննայում, ուղարկել էջմիածին՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին, Կ. Պոլսի գրավաճառ ու հրատարակիչ Վահան Ջարդարյանի «Հիշատակարանի» 1-ին հատորը ուղարկվում է Կ. Պոլիս, Բաքինե Եպիսկոպոս Կյուլենբերյանին: Հետաքրքրական են հեղինակների կից գրությունների մեջ նշված մտքերը իրենց աշխատությունների մասին: Այսպես, «Լաֆյան» ծածկանվամբ հանդես եկող հեղինակը իր գիրքը համարում է այժմեական և կարևոր, որպես մեր անցյալի իրավական և պատմական կյանքի մի պատկեր: Հայր Ներսես Ակիմյանը բավարարվում է միայն մախորք շնորհակալություն և հարգանքի հավաստիացումներ հայտնելով: Վահան Ջարդարյանը նշում է իր աշխատանքի բազմակողմանի բնույթը և վստահություն հայտնում, որ այն կարժանանա համձնաժողովի նկատառմանը և գնահատմանը:

1911 թվականի մարտի 25-ի նիստում կարդացվում են բոլոր ստացված գրախոսականները: Բաքինե եպիսկոպոսը «Հիշատակարանի» հղացումը համարում է հետաքրքրական, բայց գործը՝ թերի, առաջարկում է սպասել մինչև մյուս երեք հատորների լույս ընծայումը՝ «Թերի գործի մը թերի քննությունը՝ ուղիղ արդյունք մը պիտի չտար», եզրափակում է գրախոսը: Բացասական էին նաև մյուս գործերի ստացված գրախոսականները: Համձնաժողովի նիստում քննարկման առարկա են դառնում այդ աշխատությունները և ի վերջո միաձայն որոշում է կայացվում «Հնարավոր չհամարել ներկայացված աշխատանքներին մրցամակ տալը»⁴²: 1911 թվականին նույնպես մրցամակաբաշխություն չի կայանում:

Հաջորդ՝ 1912 թվականի մրցամակաբաշխության համար էջմիածնից Գևորգ Ալթունյանը ուղարկել է իր «Թաթարները և 13-րդ դարի թաթարական նվաճումները Հայաստանում, Վրաստանում և Փոքր Ասիական երկրներում» ձեռագիր աշխատանքը, որը ուղարկվում է գրախոսության պ. պ. Ս. Տեր-Ավետիքյանին և Ս. Օհանազարյանին, Հայկունին ուղարկել էր «Ժողովրդական բառերի բառարան» ձեռագիր աշխատանքը, որը մերժվեց թերի և անկատար լինելու համար: Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Կանայանը մրցամակաբաշխության համար ներկայացրել էին Ազաթանգեղոսի «Պատմագիրք հայոցի» առաջին և երկրորդ հատորները՝ իրենց ծանոթագրություններով, որն ուղարկվում է պ. Նորայր Բյուզանդացուն Կ. Պոլիս, Լևոն Բաբայանի «Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում» տպագիր աշխատությունը գրախոսելու համար ուղարկվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության արքահայր Գրիգորիս Վարդապետ Գովրիկյանին:

Համձնաժողովը քննարկում է նաև մեկ ուրիշ կարևոր հարց: Մինչ այդ մրցամակաբաշխության արժանացած ձեռագիր աշխատանքները մնում էին

42 Նույն տեղում:

ամտիպ' դրանով իսկ ամհայտ մնալով հայ Ռասարակության և գիտության համար: Հանձնաժողովը որոշում է կայացնում պարտադրել հեղինակներին մրցանակի արժանացած գործերը ամպայմամ տպագրել: Այս հարցին հանձնաժողովը անդրադարձել է մահ հետազայում' համարելով այն խիստ կարևոր:

Գրախոսության ուղարկված գործերը ստացվելուն պես հանձնաժողովը ծանոթանում էր մրանց բովանդակությանը, անցկացնում մտքերի փոխանակություն, սակայն վերջնական որոշում կայացնելը հետաձգում մինչև քոլոր գործերի գրախոսությունների ստանալը: 1912 թ. ապրիլի 4-ին հանձնաժողովը, մորից ծանոթանալով բոլոր գրախոսությունների հետ և կարծիքներ փոխանակելուց հետո, միաձայն գալիս է այն եզրակացության, որ մերկայացված աշխատությունների մեջ չկա այնպիսին, որը արժանի լինի ամբողջ մրցանակին, սակայն ի նկատի ունենալով, որ մրցանակը խրախուսանք է հայ գրականությանը լրջողն գրողվողների համար, մպատկառարմար է գտնում հինգ հարյուր ոտրին բաժանել մերկայացված երեք աշխատանքների հեղինակներին, սակայն համամասնության որոշումը թողնում է հաջորդ միստին: Այն կայացել է ապրիլի 5-ին, մասնակցել են հանձնաժողովի երեք անդամ' Գյուտ ալ. քհմ. Աղանյանը, Իսահակ Հարությունյանը և Ն. Տեր-Հարությունյանը, բացակայում էր ժամանակավոր նախագահ Ս. Բաբյանը: Հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն է առաջանում մրցանակաբաշխության դրամագլխի բաժանման վերաբերյալ: Գյուտ ալ. քհմ. Աղանյանը և Ն. Տեր-Հարությունյանը գտնում են, որ 200 ոտրի պետք է տալ Հևոն Բաբյանի գրքին, որովհետև մրա մասին ստացված գրախոսությունը միանգամայն դրական է, իսկ 150-ական ոտրի' Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանի համատեղ աշխատությանը և Գ. Ալթունյանի աշխատությանը: Իս. Հարությունյանը գտնում էր, որ 200 ոտրին պետք է հատկացնել Գ. Ալթունյանի աշխատանքին, որովհետև նա ամտիպ է և պետք է ամպայմամ տպագրել, իսկ մյուս երկու աշխատանքներին տալ 150-ական ոտրի կամ սպասել մինչև ժամանակավոր նախագահի վերադառնալը: Սակայն Իս. Հարությունյանի կարծիքը չի հարգվում և ընդունվում է առաջին առաջարկը: Պետք է մշել, որ մյամ փաստերը հազվադեպ են եղել հանձնաժողովի գործունեության մեջ: Գ. Ալթունյանին է վերադարձվում մրցանակ ստացած ձեռագիրը' տպագրության նախապատրաստելու համար: Սահմանված կարգի համաձայն բոլոր հեղինակներին էին վերադարձվում մրցանակի արժանացած կամ չարժանացած ձեռագիր աշխատանքները, ովքեր ցանկանում էին այն տպագրել (Ալամ Օահնագարյան, Սմբատ Տեր-Ավետիսյան և այլն):

1913 թվականի մրցանակաբաշխության համար որոշված ժամկետներում չէին մերկայացվել աշխատություններ: Ուստի հանձնաժողովը որոշում է այդ տարի մրցանակաբաշխություն չանցկացնել: Հետագա ամիսներին ստացվում է երկու աշխատություն: Առաջինը իրավաբանության դոկտոր Ա. Ղլտճյանի գերմաներեն լեզվով աշխատությունն էր, որը լույս էր տեսել Օտտոգարտում 1911 թվականին: Երկրորդը Ա. դո-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատությունը, որը լույս էր տեսել Երևանում 1912 թվականին:

Համձնաժողովը մերժում է Ա. Ղլտճյանի աշխատանքը մրցանակի ներկայացնելը Կանոնադրության Զ. Կետի համաձայն: Ա. դո-ի աշխատությունը որոշվեց պահել հաջորդ տարվա մրցանակաբաշխության համար: 1914 թվականի հունվարի 30-ին համձնաժողովի նիստում լսվում է Մ. Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունը» աշխատությունը մրցանակաբաշխության համար և որոշում է ուշ ստացված լինելու պատճառով այդ տարվա մրցանակաբաշխությանը այն չներկայացնել: Արսեն Ղլտճյանի «Հայոց Ռիմ իրավունքը» (տպագրված Ալեքսանդրապոլում) 1913 թվականին ուղարկվում է Շտոտգարտ՝ պրոֆ. Հոփսեփ Կարստից, և Ս. Պետերբուրգ՝ Սիրական Տիգրանյանին, իսկ դոկտոր Վահրամ Թորգմյանի «Երեսիա Չելեպի Քոմսորճյան Ստամպոլի պատմություն» երկասիրությունը ուղարկվում է Մաքսուդյան Վարդապետին և պ. Գասպար Իփեկյանին՝ գրախոսման: Այդ գրախոսություններից ժամանակին միայն հայր Մաքսուդյանն ու պ. Տիգրանյանն էին ուղարկել իրենց գրավոր կարծիքները, ուստի որոշվեց այդ աշխատությունները մրցանակաբաշխության ներկայացնել եկող տարի: Այսպիսով Ղուկասյան գրական մրցանակաբաշխություն չի կայանում մահ 1914 թվականին:

1915 թվականի ընթացքում ստացվում է Ստ. Կանայանի «Ամհայտ գավառներ Հին Հայաստանի» տպագիր գիրքը, որը ուղարկվում է գրախոսման պատմաբան Առաքել Բաբախանյանին (Լեո): Մրցանակի ներկայացված աշխատություններն ունեին գիտական զգալի արժեք: Այսպես, Մ. Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսության» մասին հուշակավոր լեզվաբան և հայագետ Ա. Մայեն, հանդես գալով ֆրանսիական գիտական ամսագրում, այն համարել է «Արևելյան գրական հայերենի լավագույն շարահյուսությունը»⁴³: Առաքել Բաբախանյանն իր գրախոսականում գրում է. «Գ. Կանայանը ցանկացել է բացատրել և պարզաբանել Հայաստանի Ռիմ աշխարհագրական առեղծվածներից մի քանիսը: Դրանք են.

- 1) Լփաց և Մավդեից աշխարհ:
- 2) Արգհարգիվն:
- 3) Գտաց աշխարհ:
- 4) Մարաց գավառ:
- 5) Ռոստակ:
- 6) Գարդման:

Գ. Կանայանի նպատակն է եղել նյութ տալ Հայաստանի քննական աշխարհագրության համար: Այն որքան համեստ, այնքան էլ դժվարին է՝ նկատի ունենալով այն դժվարությունները, որ կան մեծ հարցերի լուծման ժամանակ: Կանայանը ցուցադրել է ուժեղ վերլուծական կարողություն և մանրակրկիտ պրպտումների կատարելու անսպառ նոսանը»⁴⁴: Պրոֆեսոր Սիրական Տիգրանյանը Պետերբուրգից իր գրախոսականում լուրջ քննադատության է ենթարկում Ա. Ղլտճյանի «Հայոց Ռիմ իրավունքը» գիրքը՝ նշելով բազմաթիվ թերություններ և վրիպակներ: Վերջում ավելացնում է, որ Ռեդիմակը գիտական պատրաստության ու ճաշակի տեր է, ձեռնհաս արժեքավոր և հետաքրքրական

⁴³ Նույն տեղում, էջ 44:

⁴⁴ Նույն տեղում, թ. 45:

հետազոտություններ կատարելու, որ արժանի է խրախուսանքի⁴⁵: Պրոֆ. Ա. Մաքսուդյանը, վերլուծելով Հ. Թորգոմյանի աշխատությունը, այն համարում է կարևոր գործ ազգային քանասիրության համար, կարևոր աղբյուր է ուսումնասիրելու համար ԺԴ դարի պոլսահայ գաղութը: Գտնում է, որ արժանի է խրախուսանքի⁴⁶:

Մնայուն հանձնաժողովը, քննության առնելով երեք աշխատանքները և քննադատների կարծիքները, գալիս է այն եզրակացության, որ մրանցից ոչ մեկը չունի այնպիսի քաղաքական առավելություններ, որ արժանի լինի ամբողջ մրցանակի: Նրանց մեջ մյուսի կարևորությամբ առաջինը Ստ. Կանայանի աշխատությունն է, որ արժանի է մրցանակի: 1916 թ. օգոստոսի 14-ի որոշմամբ իբրև խրախույս Ստ. Կանայանին է տրվում այդ տարվա մրցանակի առաջին կեսը՝ 250 ռուբլի:

Մնայուն հանձնաժողովը Ղուկասյան գրական մրցանակի գործը համարում էր կարևոր և օգտակար ու մեծ պատասխանատվությամբ էր վերաբերում մրան, մանրակրկիտ քննության ենթարկում ստացված աշխատանքները: Այդ էր պատճառը, որ վերջին շրջանում ունենալով մրցանակի համար ներկայացված գործեր, հանձնաժողովը ամեն տարի չէ, որ մրամակներ է շնորհել:



45 Նույն տեղում, թ. 33:

46 Նույն տեղում թ. 34: